Մարդու արարման և աշխարհում նրա կոչման սյուժեներ ենք գտնում միջազգեստրյան մի շարք բնագրերում (գրի առնված Հին Կտուկարանից դարեւ առաջ), որոնցից առանձնապես նշելի են շտմերական «Ենկի և Նիմմախ»⁵⁹ և արարական «Աստրախասխա»⁶⁰ վիպասարերը: Միջազգեստրյան ավանդության համաձայն, մարդու արարումից առաջ աստվածներն իրենք էին կրտարում երկրային աշխատանքները: Ըստ շտմերական «Ենկի և Նիմմախ» վիպասարի՝ դա տեղի էր տնենում Հարավի երկրում: «Նմվարություններով ու ձախորդություններով լի աշխատանքից ազատվելու նպատակով աստվածները ժողով են գոմարում և խնդրում նայր դիցուհուն՝ ստեղծել մարդկային ցեղը, որը կաշխատեր ու կազմուեր աստվածներին հոգսից: Նիմմախ աստվածութիւն համածայնում է և աստվածներից խմասնագույնի՝ Հայտ-Ենկիի հետ ձեռնամուխ լինում մարդու արար-

⁵⁹ ETCSL, 1.1.2 (և ոյնուհե Խովս ապրութերը).

⁶⁰ Atrahasis (tr. E.A.Speiser, A.K.Grayson), ANET, p. 104-106, 512-514; MM (tr. St. Dulley), p. 1-38; "Когда ноги, подошно племя..." (Следопыт по Атрапасисе), ЯОТСС, с. 51-75 (пер. В.К.Афанасьевой).


մանք: Երկու աստվածները կավից ստեղծում են մարդուն և պյանքի շունչ» հայորդում նրան: Մարդու՝ կավից կերտվելով ու «կյանքի շունչ» ստանալով ստեղծվելու մոտիվը հետագայում այստացովի է նախառաներծ Արամի սրատմուրյան մեջ և տարածում գտել իին երրայրական, բրիտոննեական ու մահմանդական կրոնական պատկերացումներում: Ուշագրավ է, որ շումերական ավանդազրույցը փորձում է յորովի մեկնարամել մարդկանց արատավոր տեսակների ծագումը: Նշված վիպանքի համաձայն՝ մարդու արարումից հետո աստվածները հավաքում են խնջույքի նշելու նոր ստեղծագործուրյան ճնունդը, որի ժամանակ հայրած արարչազործ աստվածները կրկին փորձում են մարդ ստեղծել: Հարրածուրյան պատճառով ճախողմնով՝ նրանք ստեղծում են ամեատար էակներ շծննդարերող կին, անսեռ մարդ և այլ արատներով մարդկանց տեսակներ: Այսինքն ի ձև արատավորուրյունը իին միջազգեաւրյան աշխարհի մկանութեան համարվում էր արարչազործուրյան մեջ աստվածային սխալի արդյունք: Մարդկանց գոյզերով ստեղծելով՝ աստվածները ստիճանում են նրանց ճակատագիրը, որ այր ու կին «սւյսուին հսկիչուրյան» ասքենն միասին. շարունակվի մարդկային ցեղը, որի կոչումն է մշակել հողը, զրադեպի անսանապահուրյամբ և այլ աշխատանքներով, ստացված բարիքների գոհարերուրյամբ կերակրել աստվածներին, կատացել նրանց պաշտամունքի տաճարներ և երկրապագել հավատարմորեն. մարդը մահկանացու և, իսկ նրա զբրծն՝ անցողիկ (նշված զայտափարները բազմից արտահայտված են նաև Հին Կտորակարանի զբքերում):

Միջազգեաւրյան արարչավայրի տնօղու գտնելը մեծ դժվարյուն չի հարցուցում, քանի որ մեզ արդեն հայտնի է Հարավի երկրի տեղը (Հայկական Խոնաշխարհ), որ ընալվում էին ստատվածները մարդու արարումից առաջ (անս «Շնկերներ երկիրը Հարավի» բաժնում): Բացի այդ, հայտնի է նաև աստվածների ժողովի վայրը՝ ըստ միջազգեաւրյան (ինչպես և ուգրիրյան ու աստվածաւնչյան) հավատալիքների, որը նոյնայն գտնվել է Հայատանի լեռներում:

Հատկանշական է, որ դրախտի պատկերումը՝ կապված երկու մեծ զետերի (Եփրատի ու Տիգրիսի) խօնային ակունքի հետ, հանդիսաւմ է ինչպես միջազգեաւրյան, այնպես էլ Հայկական խօնաշխարհի և ելուսխային Կոմիսարի հնագիտական

հուշարձաններում⁶¹. ինչը ևս խավատում է նշված տարածքների հնագույն պատկերացումներում դրախտի՝ մեր լուսաշխարհում ներկայանալը:

Հասկանալիորեն, Հայաստանի՝ արարշագործորյան կենտրոն, դրախտավայր, մարդկության բնօրբան լինելու մասին պատկերացումները պետք է տարածված լինեն նախևառաջ հայ իրականության մեջ: Այդ մասին վկայություններ են պահպանվել ինչպես վաղ միջնադարյան հայ մատնազբարյան էջերում, այնպես էլ ժողովրդական ավանդազբույցներում: Արդեն անդրադարձել ենք «Աշխարհացոյցում» Բարձր Հայրին տրված բնորոշմանը: «...բարձր է ոչ միայն Մեծ Հայրի մնացած մասերից, այլև ողջ աշխարհից, այդ պատճառով էլ նրան



աշխարհի զակար են կոչել: Նա զետեր է արծակում աշխարհի շորս կողմերը. (Բարձր Հայրից) սկիզբ են առնում շորս խոչը զետեր»⁶² ... Իսկ Բարձր Հայրի Մեծ լեռը, Փալստու Բուզանդի

⁶¹ Ամենայնը, Բայալյան, 1999, էջ 34:

⁶² Երեմյան, 1963, էջ 106; Անանյան Շիրակուցի, 1979, էջ 291:

վկայությամբ, համարվել է «աստվածների տևք»⁶³: Բացի աստվածաբնակ և աշխարհում բարձրագույնը լինելը, հատկանշական է Բարձր Հայր՝ աշխարհի չորս կողմերը (Չորս) գետեր արձակելը, ինչը նոյնանում է դրախտի մասին սուսափորասիական և, հասուկապես, աստվածաշնչյան (Եղեմից բխող շորս զետերը) պատկերացումներին: Բարձր Հայրի հարևանորյամբ ծգվող Բյորակնի (Թինգյոլի) լոռնազանգվածը մինչև մեր ժամանակները պահպանվում հայկական սպանուազրույցներում համարվել է աստվածատեղ դրախտավայր⁶⁴. իսկ Բյորակնի զիշապիր զազար Անրանց (Սրբանց) Խոր «Աշխարհագոյցում» (ինչպես Բարձր Հայրը) կրել է «աշխարհի զազար» պատվաստառուսը⁶⁵: Աշտիշատի Վահագնի մեհյանի մոտակայրում Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին հիշատակում են «Հացեաց դրախտ» կոչվող վայրը⁶⁶, որ Գրիգոր Լուսովորիչը կատարել է հայոց գորքի մկրտությունը: Հայտնի է, որ հայ իրականորյան մեջ բրիտաններյան մուտքը ամենուր ուղեկցվում էր նախորդ կրտսի ոչնչացմանը և վերջինիս հիմքի վրա համամժան բրիտաննականի կառուցմամբ: «Հացեաց դրախտ» անվանումն իր մեջ կարող էր պահպանած լինել այդ վայրի՝ դրախտի մասը կուգած լինելու մասին հիշորորդունը, իսկ հենց այնունի հայոց գորքի մկրտությունը՝ խորհրդանշել նոր կյանքի սկիզբը:

«Իրախտի» Հայաստանում զտնված լինելու մասին է խոսում նաև Եղիշեն «Արարածոց մեկնորիխն» աշխատորյան Ենքնում կենևով Աստվածաշնչի մեկնորյան դիցրեմից⁶⁷:

Ներ անցյալ տարում, ի մի բնելով Աստվածաշնչի, մատենագրական տեղեկությունների և Ժողովրդական գրույցների տվյալները, Առողի Ալիշանը փորձել է տալ դրախտի տեղագրությունը՝ հանգելով հնատեյալ պատկերին: Ըստ նրա, դրախտը գտնվել է Բարձր Հայք նահանգի և հարակից տարածքներում՝ հարավում տահճան ոննենալով Հայկական Տավրոսի լեռները, արևմտարում՝ Եփրատը, հյուսիսում՝ Տայր նահանգի Պարտիկացիուր զալիսը (զալիսանված մեջ Ալիշանը պահ-

⁶³ Փատոսակի Բուզանձուայ, 1912, էջ 272:

⁶⁴ Անմարտնան, 1969, էջ 21-22 և 422:

⁶⁵ Երեմյան, 1963, էջ 107-108; Աննին Շիրակուցի, 1979, էջ 293:

⁶⁶ Մալխանի Խորենացոյ, 1913, էջ 272; Փափառու Բուզանդ, 1968, էջ 96, 100:

⁶⁷ Խաղթիլյան, 1992, էջ 245:

պանված է համարում Եղեմի պարտեզի մասին հիշողությունը), արևելքում՝ անցել Այրարատ և Տուրուքերան նահանգներով⁶³ (առևն բարտեղ Ա-ը): Երես այսօր Էլ մեր ունեցած տվյալները տև- դալիքներ բարտեզին, կատանամբ նույն տահմաններն այն տա- րածքի համար, որը հիմ առաջավորապես ականակերպու- թեան համաձայն, գտնվել է դրախալը, որուն Աստծո պատկերով ու նմանությամբ արարվել են մարդկության առաջնեկները...

ԾՈՒՄԵՐԱԿԱՆ ԴՐԱԽԱՏԻ ԱՌԵՂԾՎԱԾԲ

Նախորդ Եցերում արձանագրեցինք. որ Հայկական լեռ- նաշխարհը Առաջավոր Ասիայի վաղագույն հոգևոր ընկալում- ներում պատկերացվել է իրեւ մի տարածք, որում ի սկզբանն ընակվել են աստվածները, որ և արարել են առաջին նարդ- կանց: Առաջիկա ակնարկներում մննք դեռ կուսաններ, որ նույն պատկերացումներում Հայաստանն ընկալվել է ոչ միայն որ- պես նարդկության բնօրինան, այլև՝ վերածննդի նրկիր (ցրիեղե- ղից հետո), որը պահպամ են անմահության ու խճաստության խորհուրդները: Աշխարհներկալունային այս համստերութամ, բվում է, թե շումերական աղբյուրներում իրեւ դրախաւ հանդես եկող Թիլմուն (Դիլմուն) Նրկիրը ևս առանց երկանութիւնի պեսուր է տեղադրել Հայկական լեռնաշխարհում: Սակայն այդ երկիրը հիշատակվում է միջազգային մի շաբթ ոչ դիցարանական բնույթի բնագրերում (Ք.ա. XXV-VI դդ.)⁶⁴, որոնց բնույթունը բայց շի տալիս Թիլմունը Սիրազեարից հյուսիս տեղադրեց: Ստացվում է տարօրինակ մի իրավիճակ, մի կողմից Թիլմունը դրախտափայր է, անեղծ ու սրբազն նրկիր, որը բնակվում են սատվածները, մյուս կողմից (ոչ դիցարանական բնույթի բնա- գրերում) այն ծովային ստեարի կենտրոն է, և արրաներն, ամ- պամ նվաճելով, հարկատու են դարձնում այն: Բայց առնդպած է առ, և ո՞րն է դրա բնույթը:

Ոչ դիցարանական բնույթի արձանագրությունների հիման

⁶³ Ալիշան, 1904, էջ 10:

⁶⁴ Թիլմունին վերաբերու հիշատակերյանների մասին տես Corawall, 1946, թ. 36; Kramer, 1963(b), թ. 112, 114, սույն 10 (և կորած զբականացրելով); Ենոք, 1984, էջ. 45-47, 170-175 և այլք:

վրա Թիմոնի ամենահավանական և բնորմված տեսորոշումը՝ Պարսից ծոցի Բահրեյնյան կղզիներում է⁷⁰: Թիմոնի վերաբերյալ հաղորդումների հակասությունը լուծնու նպատակով Փ. Քորնուոլը ժամանակին առաջադրեց մի վարկած, քատ որի շումերական բարձրակրության նախակրողները բնակվել են Բահրեյնյան կղզիներում, ուստի դրանք շումերները համարել են դրախտ՝ կապված նախնիների պաշտամունքի հետ⁷¹: Սակայն միջազգեստրյան և բահրեյնյան միենույն (ուրեմյան) մշակույթին պատկանող իրերի նեյտրոնային վերլուծությունը գույց է տալիս, որ վերցիններս ավելի ուշ շրջանի են և ընթացակած Միջազգեստրից⁷²: Հետեարար, այս տարրերակով ևս անհնար է լուծել դիցարանական Թիմոնի տեսորոշման խնդիրը: Նկատենք նաև, որ ոչ դիցարանական բնույթի բնագրերում Թիմոնը սովորաբար հանդիսանում է զայխ Մագան և Սերոփա երկրների հետ, ինչը չի հանդիպում դիցարանական բնագրերում:

1914թ. հայտնարկելի գրինդելի մասին հնագույն շումերական բնագրի համաձայն, աղետից փրկված ենրու Զիուսուդրան («շումերական Նոյր») սաստվածների կամրով բնակեցված է Թիմոննում, «որտեղից ծագում է արելք»⁷³: Այս արտահայտությունը պատճեն է դարձել, որ որոշ ուսումնասիրութներ Թիմոննում տեսլացըն Շումերից արևելք և հասցնեն մինչև Հնդկաստան⁷⁴: Դա իրավացի լինել չի կարող, քանի որ, ինչպես տեսանք «Արևի երկիրը» բաժնում, շումերա-արարական պատկերացումների համաձայն՝ արևը ծագում էր Մաշտ (Մասուս, Մասին) լեռներից և մայրամուտին վերադառնում այնտեղ: «Գիլգամեշ» Էպոսում ևս գրինդելից փրկված ենրուը բնակվում է Մաշտ լեռներից հյուսիս: Այսինքն՝ քատ հնագույն միջազգեստրյան հավատալիքների՝ Թիմոն-դրախտը նույն անմահորյան երկիրն է, որը հասնելու համար պետք էր հայրահարել «ճանապարհը դեպի Արտոտա», իսկ վերջին Հայստանի տարածքում հիշատակված առաջին պնտականությունն

⁷⁰ Այդ տեսակենով ճեղագործան առջ պատճերյան նամբանանեցը սկսում 1879 թվից, անս Ջ. Թիրբիի վերոնշյալ աշխատաթյան մեջ:

⁷¹ Cornwall, 1946, p. 4:

⁷² Lloyd, 1978, p. 62-64:

⁷³ The Deluge (tr. S.N.Kramer), ANET, p. 44; Kramer, 1965, c. 180; ETCSL, 1.7.4 (և այլական նպանականությունները).

⁷⁴ Տես օրինակ՝ Kramer, 1963(b), p. 111-115:

է: Երեւանի ավելացնենք, որ Արատտան շումերական դյուցազնավեպուն հայտնի է «աստվածային տարր օրենքների երկիր» մակղիբով, նաև համարյալի է Աստվածաշնչի Արարատի հետ⁷⁵ (որմ, ինչպես և Եղեմը, գտնվում էր «արևելյան կողմում»), հասկանալի կը պատմա, որ շումերների անմահության երկիր-դրախտը նոյն Արատտան է կամ երկուսն էլ գտնվել են Հայկական լեռնաշխարհում:

Ստանում ենք Երկու Թիրմուն եկան Առաջավոր Ասիայում, ովքարանական Թիրմունը՝ Հայկական լեռնաշխարհում և պատմական (ոչ ովքարանական) Թիրմունը՝ Բահրեյնյան կղզիներում (Ք. թ. XXV-VI դդ.): Երկու նոյնանուն երկրների մասին տեղեկությունները միահյուսվել են միջազնաբարյան բնուգրերում, ինչն էլ դարձել է եկան արևելագիտության ամենից ա-



Նկ. 7. Արքայության հնագործում «մերաւզքքարյան» սյունին պատճերածամ. Եհեարանում (Յանապարշաբ) ժաման է յուրագլեւալ, որպատ ազամուց, մոխաս կիմ, ոք զբանաբանմ գայրակամ օձն է (Ք. թ. III հազարամյակ, պահպան է Հանգամբ Թքաւանակ բանգարտում)

ունդվածային լանդիբներից մեջի ծագման պատճառը: Իսկ կայ ունե՞ն նոյնանուն այլ երկրները: Երեւան անունների համբակումը պատահական չէ (ինչը թիշ հավանական է), կարելի է ներարյալ Հայկական լեռնաշխարհից բնակչության մի մասի արտազարք Բահրեյնյան կղզիներ, որի արդյունքում տեղի է ունեցել նաև տեղանփան փոխադրում: Ե՞րբ կարող էր կատարվել նման արտազարք: Վերջին սահմանագիծը կարու է լինել

⁷⁵ Մամբանառ տես Համերիս 11-ուն:

Ք.ա. մոտ 2500 թվականը, քանի որ այլ ժամանակվանից վեպայիշ է Բահրեյնյան կղզիների թիվունը: Հնարավոր արտագաղթի ժամանակագրական առավել նախնական սահմանը կարելի է համարել Ք. ա. VI-V հազարամյակները, եթե շունդրական բաղաբակրության նախակրողները բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հարավային և Միջազգետքի հյուսիսային շրջաններում (հնագիտության մեջ հայտնի Հաստոնյան մշակույթի տարածաշրջանում):⁷⁶ Ի դեպ, շունդրների համար Հայկական լեռնաշխարհի սրբազնությունը կապված նախնական մշակույթի պայմանագործությամբ էր պայմանավորված լինել հնաց նշված հանգամանքով՝ կապված նախնական մշակույթի պայմանագործությամբ և այլ այլազագործությամբ: Ժամանակագրական այսպահի մասն ընդորկման պայմաններում հնագիտության տվյալները բոլոր են տապահ ավելի որոշակիացնել հնարավոր այլտագաղթի ժամանակը: Տարիներ շարունակ Բահրեյնյան կղզիներում պեղումներ իրազործած Զ. Թիրքին գրում է, որ այնտեղ հայտնաբերված փառագույն շերտները թվագրվում են Ք. ա. XXVIII դարով⁷⁷: Նույն այլ ժամանակաշրջանում և սկսվել Հայկական լեռնաշխարհից երրեւ կատարված մեծագույն արտագաղթերից մեզր, ինչի արդյունքում Հայաստանի փառքրոնզնդարձյան (հայտնի է նաև Կոր-արտարյան, Ընդգամիթյան և այլ անոնցներով) մշակույթի կրողները հյուսիսում հասան Հյուսիսային Կովկաս, հարավում Պաղեստին (վերջինիս Քիրքեր-Կերակ հնավայրի անոնում է հնագիտության մեջ կոչվում է տարածված մշակույթը)⁷⁸: Ամենայն հսկանականությամբ, այս իրուղության հետ է կապվում նաև Բահրեյնյան թիվուննի հիմնունը: Ավելորդ շենք համարում ենք, որ Ք.ա. մոտ XXVIII դարում Հայկական լեռնաշխարհից Միջազգետքի հարավ կատարված արտագաղթը փաստվում է նաև շունդրական գրավոր աղբյուրներով (որան կանողադատնանը այլ առիրով):

Կա կարծիք, որ Դիմունը (Թիվունը) պետք է նոյնացնել Ուրմիո լճից հյուսիս-արևմուտք գտնվող Դիմանի դաշտավայ-

⁷⁶ В.К.Афансасьевна,Первые жилищные культуры Нижней Месопотамии и Элама, ИДВ, ч. 1, с. 66-75.

⁷⁷ Ենթա, 1984, ս. 346 (Ժամանակագրություն տպյանակը):

⁷⁸ Mellart, 1957; Burney, 1958; Խոնգավյան, 1967; Sagona, 1984 (և դրանց նպական գրականությունը):

թի հետ⁷⁹: Նման եզրահանգումն արվել է հիմք ընդունելով առողջության մասնակիությունը, և չի բացատրվել Ք.Ա. XXV-VI դարերի պատմական տեղեկությունների հետ հակասությունը: Բացի այդ, Դիման տեղամունքը չի հիշվում վայ շրջանի առյուրներում և Ենրադրվում է, որ այն ծագել է միջնադարում Հայաստան ներխուժած դեմքիների ցեղանութից⁸⁰: Նշված հաճախանքները հաշվի տունելով՝ թի հափանսուկան նմբ համարում Դիմուն-Դիման նույնագումը (հատկապես հինգ հազար տարում տեղանքան անփոփոխ մնալը)⁸¹:

ԱՆԴՐԱՌԵԽՈՎՐՀԸ

Սեպագիր դպրությունը ստեղծող շունքների լեզվում կտրան ունի «լեռ, երկիր, լեռնային երկիր, քննամի երկիր, անդրաշխարհ» խմառները⁸²: «Լեռ» և «երկիր» բառերի համարժեքությունը մասնագետներին հիմք է տվել եզրակացնելու, որ շունքերական նախահայրենիրն, ի տարրերության Միջազնությի հարավի, ենի և լեօնային տարածքը, իսկ նոյն տերքինի վերախնաստավորությունը իրեն «օքնամի երկիր» և «անդրաշխարհ», բերևս, հետազու պատմական իրադարձությունների ազդեցության արդյունք է: Հատկանշական է, որ կոր-ոչ միայն հասարակ գոյական է, այլև որոշակի մի երկրի անվանում: Վերջինիս մասին տեղեկությունների տառմնաւիրությունը կարևոր է հայագիտության տեսանկյունից, հատկապես, Հայոստանի նաև հնագույն պատկերացումների ամբողջացման առումով:

Կորն, բառ շունքերա-արարական առյուրների, շափազանց հետապնդ մի երկիր է: Այդ երկրի տեղորոշման հարցում մեզ օգնում են շունքերական «Նինուրրա տատեռ սիրանքների

⁷⁹ Այդ տեսակները բանություն գրությի թերացրու մեջ է հայտնի Գերոյ Զանյանը:

⁸⁰ ՀՀՀՏԲ, և. 2, ե., 1988, էջ 113:

⁸¹ Մերացրում նմք, որ Հայոստանում Թիգրան տնօւն հիշապերյանը կարող է պահպանված լինել Կաքսորի թնօն (նաև Թնձիու) և Սոփրի Թնձիս տեսրություններում: Սոփրի թնձիար զանքելի է Եվերտուի տովին և ճննառ է Ալյանքի արմագծում զբախակի տաճանանների մեջ, իսկ Կորդիսոց աշխարհի Թնձնուն Ռուբրուա թառն անչիքին, որի հետ նմ կուղլուն համաշխարհային ջրիների մասին մի բանի հիմ ափանձություններ:

⁸² Kramert, 1961, p. 76; B.K. Աբրամչեսա, Կոր, ՄՀԿ, տ. 2, 1992, էջ 29:

ո գործերը»³³ և «Խնաննան ո Երիխո»³⁴ վիպասարերը: Առաջի-նի համաձայն, Կոր Երկիքի երեշտանոր մնացոր Ասազ (արադ, Ասակլո) աստծո դիմ մարտնչում է միջազեւարյան պատերազմի ու Երկրագործության աստված Նինուրրան, բայց պարտվելով՝ «բացունի պես» փախուստ է: Ի վերջո, նրան հայողությունը է հաղբել Ասազին, որի կագարանը (անդրաշխարի Դուրը) Տիգրիսի ակումբների շրջանն էր (Հայկական Տավրու լեռնաշղթան): Միջազեւարյան անդրաշխարիի տնտայնացումը լիովին համապատասխանում է հնագույն հայկական համարժեք համարժեքներին: Աստվածաշնչի հայնքնեն բարզմանուրյան մնջ միջազեւարյան անդրաշխարիի տիրակալ Ներգալի անոնք փոխարինված է Անգեղով (Թագավորաց Դ, 17,30), ինչը ցույց է տալիս վերջինիս նույն դերը կատարելը հայոց հին դիցարանում: Խոկ Անգեղի պաշտամունքի վեճույթո՞ւնը՝ Անգեղ տուն զավառը գտնվում էր հենց Արևմայան Տիգրիսի ակումբներում (Աղձնիք Խահանգում):

«Խնաննան ո Երիխո» վիպասարում ևս ներկայացվում է միջազեւարյան աստծո պայքարը ընդունակ Դուրի, որն այս անգամ հանդիս է զալիս Երիխո լեռան տնարով³⁵: «Երջինս գտնվում է Լուսուրի երկրում՝ Ուրմիա լիից հարավ³⁶, ինչը ցույց է տալիս, որ, բայց միջազեւարյան հավատապիրների, այդ շրջանը ևս մտնում էր անդրաշխարիի վերգետնյա սահմանների մնջ: «Ուկերեք Երկիրը Հարավի» բաժնում արյին ասվել է, որ Հայկական լեռնաշխարհում գտնվող Հարավին ևս իրական պատմական տարածք լինելով՝ նախ համարվել է աստվածների բնակությունը, ապա՝ անդրաշխարի: Այդ առումով ոշագրավ է հին միջազեւարյան աշխարհինկարումներում Հայկական լեռնաշխարիի աստվածայնուրյան ընկալման երկակիությունը՝ և դրական, և բացասական բնորոշումներով: Ընդ որում, դրականը (աստվածների) ու անմահուրյան Երկիրը, դրախատը) գտնվում էր հյուսիսում, իսկ բացասականը՝ նրանից հարավ, դրա համար էլ անմահուրյան որոնող հերոսը Միջազեւարից պետք է անցներ Մասու լաները, որն աստվածների ու մարդկանց աշ-

³³ van Dijk, 1983; Kramer, 1961, p. 79-82; Kramer, 1965, c. 206-208; ETCISI, 1.6.2 (և ոյմանձ նոված տորյարձնեց):

³⁴ Kramer, 1961, p. 82-83; ETCISI, 1.3.2 (և ոյմանձ նոված տորյարձնեց):

³⁵ Kramer, 1961, p. 82-83; ETCISI, 1.3.2 (և ոյմանձ նոված տորյարձնեց):

³⁶ Լուսուրիի ծոսին ան Кլենց, 1966, S. 349-371:

խարիծի ասիստանազիծն էր, հաղբահայելոց մույթ աշխարհն ու մահվան ջրերը և նոր միայն հասներ հավիտենական երանուրյան երկիր: Նոյնայլիսի դիրք ունեն նաև դրախուն ու անդրաշխարիդ հայկական հավատափրներում. Քարձը Հայքը՝ հյուսիսում, Ասգեղ տունը՝ հարավում (ավելի մանրամասն՝ ստորև):

Փոքր-ինչ շեղվելով նյուրից՝ գանկանում նոր մեկ անգամ ևս ընդգծել շումերա-արադական առյուղների (այդ բվում անդրաշխարի Կորին վերաբերող) ուսումնասիրուրյան կարևորությունը հայազիտուրյան համար և մի քանի նկատմաներ, որոնք կարող են զարգացվել հետազայտ։ Ասոց (Ասակկո) աստվածը, որի կացարանը (իմա՝ պաշտամունքի զյսավոր կննարունը) Հայկական Տավրոսն էր, կարող էր հայաստանյան բազում այլ աստվածների նման իր անունը բոլորի Հայոց Ռուս տոնարտում, հայկական օրացույցի անսկա XVII օրանունն է «Ասակ»⁸²: Հայաստանի տարրեր վայրերում պահպանվել են «ասակը» հիմքով բազմարիվ տեղանուններ: Հնարավոր և ենթայրել նաև այս ոլցանկան կամք Աստվածաշնչում Հայաստանին տրված «Ասրանազյան» անվան հետ բառ Ծննդոց գրի (10, 3), Թորգոնն ու Ասրանազը եպրայրելու էին: Արանց կողքին ամենատարրիրի չեն մշել, որ, ըստ Աստի Ալիշանի թերած վկայության, հայերը հնում կոչվել են «ասակեր» (հնատ, Ակայորդի=Հայկազն, (հ)ակայր=հայր)⁸³: Խոկ Ասոցի ծննդյան պատմությունը բազմարիվ բանահանաներով բնուգրային նմանություններ ու հաճապատասխանություններ ունի Վահագնի ծննդյան հիմնի հետ⁸⁴: Կորի հետ կարող է առնչվել Հայկական լեռնաշխարհում «Լանի» բազմավորության և ավելի վաղ ժամանակաշրջաններում մեծ տարածում ստացած երևանի վրոպական Կուեռա սատու պաշտամունքը⁸⁵ (քնաքետ այդ մասին երատարակված աշխատանքներ չկան, նման կարծիքի և՛ մեր զիտնականներից շատենք): Կուեռան Կուառ անվանը հիշվում է Զենոր Գլակի և Հովհանն Մասիկոնյանի կողմից՝ որպես Վահագն-Գիտանի և Աստիկ-Անահիտ-Դեմետրի ավագ

⁸² Անոնիս Շիրակացի, 1979, էջ 257:

⁸³ Ավելան, 1904, էջ 55-57:

⁸⁴ Petrosyan, 2002, pp. 38-40.

⁸⁵ Կուեռ-Կուառի պաշտամունքի մասին առև Հայական, 1990, էջ 152-166:

որդիմ⁹¹: Թերևս կարելի է շարունակել բնամային վերաբերող նկատառությունների շարրը (որոնց մի մասը կարող է և մերժվել հետազայտմ), առկայն առվածքը բավարար համարելով՝ անցնենք համաշխարհային ջրհեղեղի մասին ավանդապատճեններին:

«ԵՐԵ ԶՐՀԵՂԵՂԵ ՄՐՐԵՑ ԱՄԵՆ, ԲԱՆ»...

Աշխարհակործան ջրհեղեղի մասին բազմարիվ հիշատակումներ են պահպանվել տարրեր մայրագանաբներում ապրող ժողովուրդների ավանդագրույցներում⁹²: Դրանց մեջ առանձնանում են մի խումբ պատմություններ, որոնք սյումետային մանրանասներով առավել նույն ու կապված լինելով՝ զրի են առնվել ինչ Առաջավոր Ասիայում:

Սեծ ջրհեղեղի մասին զրի առնված հնագույն պատմությունը շուտերականն է, որը գիտական աշխարհին հայտնի դարձավ 1914 բանկանին⁹³: Մինչ այդ՝ 1872 բվականին, Զ. Սմիրը երաժարակել էր ջրհեղեղի մասին բարեխոնյան (արայական) պատմությունը՝ «Գիրգաննշ» ևրոպի 11-րդ պատկանատրության հետ: Երկու պատմությունների համաձայն էլ մարդկանց սրբազնությունը սպառում է ատավածային հսկմքերությունը, ինչի արդյունքում մարդկաբարյունը դատապարտվում է կործանման ջրհեղեղով: Սակայն աստվածային ամենատես ու արյարադաւու աշրից չեն խոսափում մի քանի բարեպաշտներ, որոնք փրկվում են տապանով՝ հանգըլվանելով լեռան կամ լեռների վրա: Ջրհեղեղի ավարտը փրկվածներն իմանում են տապանից բռչումներ արծակելու միջոցով:

⁹¹ Հիցումնենների համարժերարյան վերականգնությ տես Խարբյան, 1893, լք 20-27, 54-60; ևնուն. Հմայույնան, 1990, լք 154-160:

⁹² Դրանց մեծապային մասը տես Փրեսը, 1985, ը. 63-159:

⁹³ ANET, ը. 42-44; Կրոմեր, 1965, ը. 175-180; ETCSL, 1.7.4 (և այսուհետ կոված տարբերակները).

⁹⁴ ՀՈՊ, լք 155-165; ԱՌԱՎ, ը. 211-220; ANET, ը. 88-89; ՄՄ, ը. 109-120.



Ն. 8.
Համաշխարհային
քրեսնայի տապան
ճամագույն
բազալտիան
բազալտը զամանակաց

Աստվածաշնչում փրկության վայրը Արարատի լեռներն են (ԱՅԱՀՈ. 8, 1-4), իսկ «Գիլգամեշ» էպոսում՝ Նիմուշ (այլ ընթերցմանը՝ Նիսիր)⁹⁵ լեռը՝ Հայկական լեռնաշխարհի հարավում։ Որ միջազգետը յան և երանից ծագող ավանդություններուն Հայաստանն է հանդես գալիս որպես փրկիչ տարածք, ակնհայտ է նաև Քերոսոսի (որի մասին խոսվել է «Աստվածների մատ՝ Հայաստան» բաժնում), Ակերանող Բազմավեսպի, Արյուղենոսի⁹⁶, Հիերոնիմոս Եղիսայացու, Մաստեսասի, Նիկողայոս

⁹⁵ Ավանդության թվանկան է տեղանախան Նիսիր (Նիսիր) լեռներում, առկայի եմնելով որոշ ֆուստերի առկայաբերանից՝ առաջարկվել է ամենաբարձր Խոսնություն Նիսիր թքերցում (Lambert, 1986, թ. 185-186)։

⁹⁶ Ավելանուց Շոգմանեսպի և Այշուշենոսի Խոսնությունները (այսնց սկզբանաբարյուր Քերոսուն է) մեզ են հասկել Եփերինու Եփուրացաւ երկի միջոցով։ Այս-

Դամասկոսու, Հռիփսիլոսու, Եպիսքոսու Կենաքրացու և այլոց հաղորդումներից⁹⁷: Ուշագրավ է, որ դուրսանան ջրինեղեղի պատմությունը ևս (նոյնակես՝ ստացավորասիսկան ծագութ ունեցող) Հայաստանի հարավը՝ Զույլ իտու է համարում վրդիկուրյան վայրը. «Եթ ցորք նվազեց, կատարվեց Աստծո դատաստանը, և այն (տասամբ - Ա.Մ.) կանգ առավ Զույլի իտուն վրա» (Պորան, 11, 44): Նոյն շրջանում է համզպանում տասպանը նաև Խորենացու վկայակոչոցած Ռիմապիոդորոս Փիլիսոփայի հին անգիր գրացցներում⁹⁸: Իսկ ասորեստանյան սեպագիր արցյուրմենքում Կորդվաց Խոնների տարածքում հիշատակվում է Արարատու լեռը⁹⁹:

Զրինեղեղի մասին շումերական բնագրում, թերևս վճառվելու պատճառով, բացակայում է վրկարար տարածքի անոնք: Բարերախտարար, այդ բացրութումը հնարավոր է լրացնել շումերական մեկ այլ բնագրի հաղորդմամբ, որուն Արատուն երկրի ժողովրդին տրվում է հնաւյալ բնօրոշումը.

«... Երանք, որ կանգնեցին զրինեղեղի մեջ.

այն ժամանակ, երբ զրինեղեղը սրբեց ամեն բան»¹⁰⁰ ...

Արատուն Հայկական լեռնաշխարհի մինչ օրս հայտնի առաջին պետորյունն է (Վկայված Ք.ա. XXVIII դարից), որը ըև՝ անվամբ, թե՝ տեղագրուն և թե՝ զրինեղեղի հետ կապված ա-

տանքը Բնորմավեպ՝ «... և եթ անզին յարում վայրի եկապ կային, Հայոց աշխարհն է», Աքյուսնառ՝ «... և նոն երբնալ յաշխարհն Հայոց բարձրենք. և, ի վայսեաց գեղ օգնութեառեան բնակչաց աշխարհին սրբազներ» (անս Ետիսերի Պատմվիթայ Կառարացոյ, 1818, էջ 18 և 25): Հիերոնիմոս Եղիպատացա («ոքը զրել է Փամբիկայի հնայասարքությօ»), Մատուսակ տեղեկարյունների նաև մեզ հասպորդում է Հովհանոս Փրամվառ, ոքը մնջերում և նոն մի հասպատ Նիկողայոս Դամասկոսց Երկից (Հռիփսիլոս Փրամվառ, Հրեսկան հնայասարքուն, I, 94-95, էջ 54-55): Ն. Դամասկոսց հապարքամանց կամպրապատմանը Հավերիսած Ք.-ամ:

⁹⁷ Էվլիքրան Կառարացա, Հիերոնիմոսի, Եպիսքոսայուս Անտարքաց, Հայիսն Ռոկերերանի, Թեղադրեալով, Խոհեղը Ալիքրաց, Եախվանի մեկնարական երկերի համապատասխան Խոտվութենքը՝ կողմաններով՝ անս Ռեզիլիսն, 1947, էջ 9-21:

⁹⁸ Մամիսոնի Խորենացայ, 1913, էջ 25-26; Մամիսա Խորենացի, 1981, էջ 105-106:

⁹⁹ Հիշատուկովու և Աշարմասիրոսու Ա-ի կողմից (առև Արարուղ), Արքելի տաքրերակներում), անս Լուքենիլ, 1926, № 441, պ. 142-143, Ճյակոն, 1951, № 2, ս. 285, 289, պրու. 12; Grayson, 1976, № 546, պ. 123:

¹⁰⁰ Kramer, 1952, պ. 42-43; Canessa, 1964, ս. 218; Cohen, 1973, պ. 140.

վանդուրյամբ գուզաւըքելի ու նույնական և Աստվածաշնչի Արարատի հետ։ Արատսա-Արարատը փրկիչ երկիր է հանդիսամում ինչպես շումներական, այնպես էլ աստվածաշնչյան աշխարհինկապարտմեներում։ Ընդ որում, Աստվածաշնչի հաճածային Արարատի լեռներում կնքվեց Աստծո և մարդկուրյան հավիտանական ուխտը, որի խորհրդանշանը դարձավ ծիածանը (Ծննդոց, 9, 12-13)...

Չարկ փրկարար տապանի հանգրվանատեղին՝ Եջենք, որ թէ՝ իին հնդիմակները և թէ՝ սերբնաներունու փոխանօվված ավանդագրույցները ճատնամշում են իջման երկու շրջան՝ Հայաստանի հարավը (Կորդվաց լեռներ) և լեռնաշխարհի կենտրոնում գտնվող Մեծ Մասիս-Արարատը։ Ակզրնառյուրների մի խումբ էլ պարզապես նշում է, որ փրկուրյան նավն իջել է Հայաստանի լեռներում առանց որոշակիացնելու տեղը։ Երեք դեպքում էլ վկայվում է հնագոյն առաջավորաւստական հոգևոր ընկալումներում Հայաստանի հանդես գալն իրք մարդկուրյան վերածննդի երկիր, նոր մարդկուրյան հայրենիք։ Զրիեղեղից հետո մարդկուրյան վերապրումը յորօրինակ մի նոր արարշագրութուրյուն էր, և ոչ պատահականորեն այն տեղի է ունենում մարդկուրյան արարծան վայրում՝ Հայկական լեռնաշխարհում։ Պատահական չէ նաև, որ հետու մի շարք ժաղավորութերի դիցա-վիպական պատկերացումներում առաջին մարդու ծննդավայրն ու ջրինդնդից փրկվելու տեղը համարվել են երկիր պորտը, որ գտնվում էր աշխարհի առանցքը, որը և աշխարհի կենտրոնն էր¹⁰¹։ Հենց այդպիսի ծեակերպմամբ է պահպանվել ջրինդնեղի պատմուրյունը Թովմա Արծրունու մոտ։ «Աստվածային երամանը կատարվելուց հետո ավեծուի ջրերը տապանը բերեցին արեւելք՝ աշխարհի կենտրոն, և այն նստեց Կորդվաց լեռներին։ Եվ նահապեար գոհուրյան գոները ճատուցնց Աստծոն, որը խոստացավ այլևս նույնը ջնառուցել աշխարհին, հավիտենական ուխտ հաստատեց՝ «Իմ ապեղը պետք է դնեմ ամալի մնջ»։ որը ծիածանն է, որ ոմանք համարում են ամալից զատված եութ, իսկ կոտայիշտների որդիները՝ Արամագդի գոտին»¹⁰²...

Աշխարհակործան ջրինդնդի մասին ավանդագրույցներ են

¹⁰¹ Տուորօն Յ.Ն., Պատ Յանու, ՄՀԿ, թ. 2, 1992, ս. 350.

¹⁰² Թագիս Արծրունի և Սնանեն, 1985, լգ. 32-33։

գոյուրյուն տնեցել նաև նախաքրիստոնեական Հայաստանում։ Մի զրոյցի համաձայն՝ հայոց Արամազդ և բաղնացվոց Թրութան աստվածների միջև քննանորյուն կար, և Արամազդը հայրելով՝ ջրախեղի արեց Թրութանին¹⁰³ (սա, թերևս, Հայաստան-Միջազնաք հնագույն հարաբերությունների արտացոլում է զիցարանորյան լեզվով): Մեկ այլ պատռմի համաձայն՝ Ծիր Կարինը Երկնքի պատռածքն է, որից բափվել է ջրեղեները երկրի վրա և բողել իր հետքը Երկնքում՝ ի տես մարդկանց¹⁰⁴. Հայկական ավանդությունը յորորինակ մի փառարանորյուն-օրիներգ է Մեծ Մասիսին. Փրկարար տաւալանին հայոց լեռները խորհուրդ և առաջի գնակ դեսի ճայր լեռը, որ մեծ ու բարձր է բոլորից¹⁰⁵:

Քրիստոնեորյան բնոյունումից հետո հայկական ավանդագորույցները (որոնց մի մասը մոռացվեց) ճիշճուղինեցին աստվածաշնչյան պատության հետ, և ձևավորվեց մի նոր ավանդավեպ, որը դեռևս կարիք ունի համակողմանի ուսումնասիրության (տե՛ս նաև Հավելված Բ-ում):

ԱՆՏԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ. ՀԱՅՈՅ ԵՐԿՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Աստվածաշնչի հայտնի պատության համաձայն՝ Աստված Ետիսի կենարունում տնկեց կենաց, բարու և շարի իմացության ու բազմաթիվ մրգատու ծառեր՝ պատվիրելով ուսել միայն մրգատու ծառերի պտուղները։ Օճի օջջամտության շնորհիկ առաջնասաններ մարդիկ ճաշակեցին բարու և շարի ինացության ծառի արգելված պտուղը, բացվեցին նրանց աշքերը, ու աստվածների նման նրանք ճանաչեցին բարին ու շարի։ Եվ զգուշանալով, որ նարդիկ կճաշակեմ նաև կենաց ծառի պտուղը, կանմահանան ու կստվածանան։ Աստված վտարեց

¹⁰³ Ամիշան, 1904, էջ 44:

¹⁰⁴ Համարանյան, 1969, էջ 7, 420:

¹⁰⁵ Դամարանյան, 1969, էջ 12, 24, 26, 54։ Ուշագյալ է, որ այս սյուժեն տարածվեալ քեզեւ և ցրենքնեց «կոմիկայան տարբերութիւն» ձեմքում, բայց որի տառապեր նախ բշել է Կոստրիկ ինուն կրպմը և երես կեսի բաժնամեջ նյու զրագույր, ինսա նուսեւ Արարտա թառանք և կոստր տաեւ նրու վրա (Դամարանյան, 1969, էջ 54-7):

մարդկանց դրախտից և դեպի կենաց ծառը տանող ճանապարհներին պահապան դրեց քերոքըներին ու բազեղեն սորը (Ծննդոց, 2,8-3,24):



Նկ. 9. Այս պատկենք վճրցված է 1634 թ. Համբարձում երանակարգիկան
Սվենտուրանից, որտեղ Հայուստանը ծերիքայազման է պատկանույթ մարդկարյուն ժմանակայր

Աստվածաշնչյան ընկալմանը՝ աստվածայինի ու կենացնականի միջն կա նրկու խոշոր անջրաբն ՝ խմաստորյունն ու անմահորյունը: Երկու աստվածային հատկանիշները խոր-

երբուանշոյ պրազամ ծառերն աճում էին դրախտություն ու աշխարհի կենտրոնն էր), որի տեղադրությունը Հայկական լոռնաշխարհում հայտնի է վաղոց Ռոստի. Հայուսուանի մասին աստվածաշնչյան պատկերագումների շարքում (դրախա, մարդկության վերածննդի, Աստծո և մարդկանց հավիտննական ուստի երկիր) պետք է ընդգծել հմատության ու անմահության խորհուրդներ կրնել և:

Արդին նշվել է, որ Հին Կտորկարանի մի շարք սյուժեների ու պատկերացումների ակունքները կապվում են հին Միջազգետի հետ: Բացառություն շնոր կազմում նաև ինաստության ու անմահության խորհուրդներին առնչվող թեմաները: Թե՛ Աստվածաշնչում և թե՝ միջազգետրյան հնագույն բնագրերում մարդը հասու է լինում միայն ինաստությանը (օժտվում բանականությամբ), բայց մնում է մահկանացու՝ միջին դիրք գրավելով աստվածայինի ու կենդանականի միջև: «Իրանով նա, առկային, շադրեց անմահության ձգուելոց, և հավիտննական կյանքի որոնումը դարձավ մարդու մշտական ուղեկիցը: Հնագույն միջազգետրյան ավանդության մեջ անմահություն որոնող զիսափոր հերոսը Գիլգամեշն է, որի մասին ասցերը զրի են առնվել հին աշխարհի բազմաթիվ լեզուներով: Ծովերական «Գիլգամեշն ու անմահության երկիրը» վիպերգում Գիլգամեշը որոշում է ուղեղորդիլ անմահության երկիր, որին հասնելու համար Ուրու (Արե) աստվածը նրան տալիս է «ողեափի Արատուա ծանապարեց ցույց տվուր» յոր ուղեցույցներ՝¹⁰⁶: «Գիլգամեշ» Էպոսի ինքանական տարրերակում հերոսն բնկերոց հետ մնկնում է անմահության որոնման Եփրատի հոսանքն ի վեր՝¹⁰⁷: Բայց Էպոսի բարելոյնան տարրերակում Գիլգամեշը հալրահարում է Մաշու լեռներն ու տասներկու ասպարեզ ձգվող բանձր խավարը, հասնում դրախտ իիշեցնող բարերի այցին, ապա անցնում մահվան ջրնը, հանդիսում ջրհեղեղից փորփած ու անմահության ստացած հերոսին, նրա շնորհիվ ձեռք է ըերում «անմահության ծաղիկը», որը վերադարձի ճանապարհին նրանից զրդանում է օօք՝¹⁰⁸: Ուշագրավ է, որ Աստվածաշնչում ևս մարդկությունը

¹⁰⁶ ԱՊԼԲ, շ. 131; ETCSL, 1.8.1.5.1 (և այնու նպաստ աղբյուրներ): Խոյերին բարգմանակյանց «Գարում», 1994, N 4, էջ 90:

¹⁰⁷ MM, թ. 127, էջ 32:

¹⁰⁸ ՀՍԴ, էջ 163-165; ԱՊԼԲ, շ. 218-220; ANET, թ. 88-89; MM, թ. 119.

մահկանացու և դառնում օձի միջամտուրյան հետևանքով:

Գլուզմանը ինտ կապված անժահուրյան մասին պատկերացումները Պառագավոր Ասիայում պահպանվում են բավականին երկար, անմահուրյան որոնման սյուժեում Գլուզմանին փոխարինում է Ավերաներ Մակեդոնացին: Անմահուրյան հասմելու համար Ավերաներ Մուծն, բայ հունական վնայի (գրի ստոված Ք.ա. 240ր.), բայում է «ճանապարհը դեպի Հայոց երկիր, որտեղ ակրոնը է Եփրատի ու Տիգրիսի»¹⁰⁹: Նա հասնում է հրաշը-երկիր, ապա անցնում մուր աշխարհով, հանդիպում օրինյալ մելիյն և հասնում կենաց աղբյուրին: Իսկ Ավերաների մասին սիրիական վեպում նրա ճանապարհին հիշվում է Մասսիս լեռնաշղթան¹¹⁰: Փաստորեն իին արևելյան և հելլենիստական վիպական ավանդուրյուններում «դեպի Արատուա ճանապարհը» վտխարինվում է «դեպի Հայոց երկիր ճանապարհով», Մաշու լեռները՝ Մասսիս լեռնաշղթայով, երկու դեպքում է ի հերոսը զմում է դեպի Եփրատի (ու Տիգրիսի) ակունքները, անցնում խավարով, դրախտ հիշեցնող վայրով, ապա մոր աշխարհով կամ մահվան ջրերով, հանդիպում աստվածներյալ հերոսին և ստամում անմահուրյուն: Իրականում երբեք Հայաստան չմտած Ավերաներ Մակեդոնացին վիպական ավանդուրյան մեջ բայում է նրա ճանապարհը¹¹¹, բանի որ իին առաջապերախական հոգևոր ընկալումներում մեր երկրի հետ էլեն կապված դրախտայինին և անմահուրյանը վերաբերող պատկերացումները¹¹²:

Նախորդ Էգերում անդրադարձն ենց դրախտի՝ ըստ իին առաջապերախական մի շարք աղբյուրների՝ Հայկական լեռ-

¹⁰⁹ Lipinski, 1971, p. 46.

¹¹⁰ Lehmann-Haupt, 1927, S. 797-798; Lipinski, 1971, p. 47; Tysaez, 1924, c. 262-263; Խնդիրյան, 1947, էջ 120:

¹¹¹ Նշեք, որ հայկական ավանդագրայցներում պահպանվել են և Մակեդոնացու Հայաստան գայու, և «մեր աշխարհամ» «քրյու աշխատի» Խաններ, ոտնճահական շայք՝ ձեռք թքելու սյուժեները («Համարմանք», 1969, էջ 279-282, 472):

¹¹² Համական աղբյուրներում երշապ Այս երկիրը, որտեղ իշխում էր արևի որդին, և պատմած Ռուկ Վեզը, մաս հավասնականությամբ, նոյնագիտությունը Հայրառու-Հայոցի հետ (Զահակյան, 1987, էջ 285; Պետրոսյան, 1997, էջ 86-89; Մարտիրոսյան, 1997, էջ 24): Այս երկրի Ռուկ Վեզը կապված է խերական աղբյուրներից Խոյստին մշատագործ էա ծառի հետ, որից կախված աշխարի զեզմէ խորիրդանշան էր բայր բարիմնեց (ԽԴН, էջ 61):

Աաշխարհում տեղորոշվելուն: Նշվել է նաև, որ հայկական սորբութեանքի համաձայն՝ դրախտը գտնվել է Բյուրակնի լոռների, Բարձր Հայքի ու հարակից շրջաններում: Այդ տարածքի հետ և՛ն կապվում անմահորյան մասին բազմարիվ հայկական սփանդագրույցներ, որոնց համաձայն Բյուրակնում էր աճում անմահորյան ծաղիկը (խոտը) և բխում անմահորյան ադրյուրը: Դրանք կենդանացնում էին մեռյալին, բուժում անհույս հիվանդին, վերադարձնում կույրի տեսողությունը¹¹³: Հատկանշական է, որ հայկական հնագույն պատկերացումներում դրախտանըցրաշխարի տեղայնացումը նույն է, ինչ առաջավորասխական վերոհիշյալ գրույցներում:

Անսահորյան երկիր-դրախտը գտնվում էր անդրաշխարհից հյուսիս, և հարավից եկող անմահորյուն որոնող հերոսը նախ պետք է անցներ անդրաշխարհով: Վերջինս, բայց հայոց վաղնջական հավատալիքների, գտնվել է Հայկական Տավրոսի լիռնազանգվածում, Անզե՞ն տում զավատի տարածքում: Միջազնետրյան աղբյուրներում իրք անդրաշխարի համեմս եկող Կուրը ևս տեղայնացվում է Հայկական Տավրոսում՝ Տիգրիսի ակոնքների շրջանում: Գլխամեջը նախ անցնում է Մաշու (Մասի(ո)ս-Մասին) լեռները, որոնք ծգվում են Հայկական Տավրոսի հարավով, հարդահարում խավար տարածությունը, դրս զալիս հերիարային քարերի այգին, ապա անցնում մահվան ջրերով և հասնում նարատակեալեալիմ¹¹⁴: Մաշու լեռներից հետո տասներկու ասպարեզ տարածվող խավարը, ինչպես ցույց է տվել Ա.Ֆ.Լեհնան-Հառուպտը դեռևս տասնամյակներ առաջ, Տիգրիսի բնական բունելն է, որի ելքի մոտ գտնված ասորեստանյան սևապազիր արծանազրություններում նշվում է այդ տարածքի՝ Տիգրիսի ակոնքն ու օարելի ելքի և արևանուսի հզոր լեռները՝ լինելլը¹¹⁵: Քարերի այգու պատկերը հիշեցնում է Աստվածաշնչի Եցեկինի նարզարեորյան (28, 13-14) դրախտի նկարագրությունը: Իսկ մահվան ջրերի ու մոր աշխարհի

¹¹³ Պատարանյան, 1969, էջ 21-22, 422: Խախացքլուռնեական հոյ իբականաթեան մեջ կենաց ծառի և անմահորյան ծաղկի սրբառանամբք մասին կարող են վկայել մինչև 19-րդ դարի վերքերը սրբառանամբք արևարդիների հոմանիքները, որոնք ենքրպազում կմ արևը, բարձի ծառն ու շաշան ծաղկեր (Երտուք, 1967, էջ 102-112; Nersisian, 1987, pp. 66-67, 94):

¹¹⁴ ՀԱՊ, էջ 143-165; ԱՊՀԲ, էջ 200-220; ANET, p. 88-97; MM, p. 96-120.

¹¹⁵ Lehmann-Haupt, 1910, S. 430-462.

տարածքը նոյնանում է հայոց անդրաշխարհի՝ Անգեղ տաճ հետո: Այն հայրահարելոց հետո միայն հարավից եկողը կարող էր հասնել հայոց դրախտաշխարհ՝ Բարձր Հայք և Բյուրակն:

Այսպիսով, թէ սյուժետային մանրամասների և թէ աշխարհագրական տեղայնացումների բրնձորյանց ցույց է տախու, որ հնագույն ժամանակներուն Առաջավոր Աստվայուն ստեղծվել և հեղենիզմի դրաշքանում գոյուրյուն է ունեցել անմահուրյան ժամանակակից կյանքի խորհրդը պահպում եր Հայկական լեռնաշխարհում, տատի և անմահուրյուն տեսչացող եերուսին վիճակված էր անցնելու ճանապարհը դիպի Արատուա՛ Հայոց երկիր...

ԵՐԿԻՐՆ ԻՍԱԿՍՈՒԹՅԱՆ

Միջազգեստրյան հնագույն թագրերի ու Աստվածաշնչի զադափարասյուժետային առնչակցուրյանն ակնհայտ է նաև նախասկզբնական իմաստուրյան թեմատիկայում: Խնչպես նշվեց, բարու և շարի իմացուրյան ծառն, բատ Հին Կտակարանի, զանվել է Եղիսամ Հայկական լեռնաշխարհում, որ և առաջին մարդիկ հասու են դարձել իմաստուրյանք (Ծննդոց, 3, 1-7): Այդ առումով առանձնահատող ուշադրույթան է արժանի շումերական թագրերից մեկի հատրուրյանը, որն իմաստուրյան ու արվեստի ծագումը կապում է Հայկական լեռնաշխարհի հետ: «Իմաստուրյանն ու արվեստը ցած թերվեց Արատուայից»¹¹⁶:



Կ. 10. Գիրկամեշի արձանը՝ պատրաստված Ք. ա. VIII դարում (Լուլիք բանգարան)

¹¹⁶ Alster B., Studies in Sumerian Proverbs, 1975, p. 128, n. 32 (լուս Berlin, 1983, p. 22):

Հին միջազգեառյան դիցարանությունը Հայոց լեռնաշխարհի հետ է կապուն աստվածներից իմաստագույնի՝ արարչագործ, իմաստուրյան, համաշխարհային օվկիանոսի ու ստորերկրյա ջրերի աստված Հայու-Էնկիի սրաշտամունքը։ Նրա զիյսավոր կացարանը գտնվում էր Արգուում, որի վերերեկրյա շրջանների՝ Հայկական լեռնաշխարհում գտնված լինելու մասին խոսվել է «Արարշագործուրյան կենտրոնը» բաժնում։ Միջազգեառյան հավատադիրների համաձայն՝ Արգուում էին բնակվում յոր իմաստունները, որոնց Հայու-Էնկին ուղարկեց բարյարակըրբուրյուն տարածելու մարդկանց մեջ։ Նրանցից հատկապես հայտնի է Օաննեսի պատմությունը (Չնորիկվ Շերտուսի գրառանան), որը նինջ այդ կենդանիների նաև ասցող Բարինոնի ժողովրդին սովորեցրեց զիր, զիստրյուններ, շինարվեստ, երկրագործուրյուն և այլն¹¹⁷։ Շումերական աղյուսինություն իրք բարյարակըրբուրյան բնօրրան է հանդիս զայխ նաև Հարալի երկիրը (տե՛ս «Ուսկները երկիրը Հարալի» բաժնում)։

Ի մի թերելով ասվածը տեսնում ենք, որ արարշագործուրյան կենտրոն, մարդկուրյան ծննդի ու վերապրումի վայր, որախառ ու անդրաշխարհ համելիսացած և աննահուրյուն շնորհող մեր լեռնաշխարհն, ըստ միջազգեառյան պատկերացումների, եղել է նաև բարյարակըրբուրյան բնօրրանը...

ԲԱՐԵԴԱԾԸ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ ՍՈՒՐԲ ՕՐԻՆԱՅՑԵՐԿՄՈՒՄ ՀԱՅԱ ԱՍԾՈ ՈՐԴԻՆԵՐԸ

Շումերական դյուցազնավեապում Արատուան հանդիս է զայխ «աստվածային սուրբ օրինաց երկիր» պատվանում-մակըիրով¹¹⁸. «Աստվածային սուրբ օրինացներ» (Չոմերերն՝ «մե») ասվածի տակ հատկացվում էին ոչ ըև պարզապես օրենքները, այլ այն մեծագոր սրբազն ուժերը, որոնք կառա-

¹¹⁷ MM, p. 182-183; Schnabel, 1923, S. 253-256; В.К.Ағանուչչեա, Оникес, МВІМ, т. 2, с. 234.

¹¹⁸ Շամերն կար-տէ-սիկիլ-լա պրուկաստորինթրաքմանվէտասքիլ կերպ (անս օրինակ Krammer, 1952, p. 21; Каневս, 1964, с. 208, 210; Собеа, 1973, p. 123; Berlin, 1979, p. 57 և այլն): Զանձի որ «մե» էին կոչվում առողջածոյթին օրինացները, մենք հայութաբան ենք առավաճային սուրբ օրինաց երկիր» բարբառակարյան։

փարում էին ողջ տիեզերքը, աստվածային ու մարդկային իրականության բոլոր որորաները: Այդ իսկ պատճառով առաջարկվում է շունչերնեն «մե» բառը բարգմանել «էության, լինելություն»¹¹⁹: «Աստվածային սուրբ օրենքների» ախրական, բայց շունչերա-արարական դիցարանության, Հայան (Էնկին) կը աստվածներից հմաստնագույնը, որի սրաշատամունքն, ինչպես նշվել է, կապիտում էր Հայկական լուսաշխարհի հնտ:

Միջազգեստրյան զրականության հսկողությունների համաձայն՝ սրբազն մեր լուսաշխարհում, որ անդի էին ունեցել աշխարհաբարձան գլխավոր իրադարձությունները և պահպամ էին տիեզերքը կատավարող սուրբ օրենքները, անմահության ու խաստության խորհրդական բնակվումները, բնակվում էին ոչ թ՛ սովորական մահկանացուներ, այլ թնորյալ ժողովուրդ: Այդ մասին վկայության է պահպանել շունչերական դյուցագնաւվեսպր.

«Ժողովուրդն (Արատաւայի), որ առավել է մյուս
ժողովուրդներից,

Ժողովուրդը, որին «Նոմուգին ընտրեց մյուս
ժողովուրդներից»¹²⁰...

Սա «ընտրյալ ժողովուրդ» հասկացության բացառիկ մի կիրառություն է, ոչ միայն ժամանակի վաղեմության առումով, այլ հասկացնե նրանով, որ «ընտրյալ» է համարում ոչ թ՛ ժողովուրդն ինքն իրեն (ինչպես իրեամներն ու ճապոնացիները), այլ օտարեր նրան, ընդ որում, հակառակորդ լինելով: Իսկ ու նշանակում է, որ մեր նախնիների աստվածնարյալ լիներու մասին պատկերացումը զոյտրյուն է ունեցել և ճամանչվել նաև Հայկական լուսաշխարհի սահմաններից դրս:

Նոյն սկզբնալրյուրը տեղեկություն է պահպանել աստվածնուրյալ մեր նախնիների՝ սնփական ճամապարհի զիտակցություն՝ ստաքելություն ունենալու մասին, որը վկայվում է Արատաւայի տիեզերքի խորութ:

«Երբ պատկեն Արատաւայի՝
Քարեզուր լումամ¹²¹ սուրբ օրինաց երկրի,

¹¹⁹ В.К.Աշխոսչեզ, Խե, ՄՀԿ, թ. 2, 1992, ս.127.

¹²⁰ Крамер, 1952, թ. 43; Կառու, 1964, ս. 218; Cohen, 1973, թ. 140 (բարգմանություններում կամ ու նույնա ասքերեւություններ մեջ հետևած ենք վերջին տեղապահություն):

¹²¹ Ե՞ւ է կոչվել նոմանուրը աստվածության ըմբիսմասպիս: Այս բնագար մեկ այլ նաուխածան (տապ 221-225) նշվամ է, որ Արատաւայի տիեզերքը

Երկնային լուս պատկի նման որոշեց ճանապարհն
Արատուայի,
Այնուամ ես իմ մեծության ճափին հաստատ
իմացա»¹²² ...

Հին առաջավորասիական բնագրերը պահպանել են լեռ-
նաշխարիի հնա կապված և «հայո» հիմքով ցեղանվան ու տե-
ղանունների բազմաթիվ հիշատակություններ: Մասմավորա-
պես, «հայո» ցեղանուն և տեղանուն են բազմից հիշվում Եր-
լայի (Սիրիայի հյուսիսում, Ք.ա. 24-23-րդ դր.) բնագրերում, ընդ
որում, առնչված նաև Արմի ու Ազգի հայուստանյան բաղարների
հետ¹²³: Միջազնաբայրական բնագրերում Սուրոր (Սուրարի) երկ-
րանվանը համարժեք հանդիս եկող տեղանունը «Հայո Նրկիր»
(բաղարը) է¹²⁴: «Հայո» ցեղանունը հիշվում է Ք.ա. III-II հա-
զարամյակների սահմանագծով բվազրով Աշորից գտնված
մի բնագրում¹²⁵: Խոկ խերական արձանագրություններում Ք.ա.
XV-XIII դր. հիշատակվում է Հայասա Նրկրանունը, որի -(ա)սա
վերջավորությունը խերական տեղանվանակերտ մասնիկ է¹²⁶:
Համակարգի մեջ դիտելիս՝ ակնհայտ է մեր լեռնաշխարիի հնա
կապվող Հայո աստծո անվան, շումերա-արաւյական, էրայա-
կան, հին աշուրական և խերական աղբյուրների «հայո» ցեղ-
անվան ու նրանով կազմված տեղանունների և նայ ժողովրդի
ինքնանվան ծագումնաբանական ընդիհանրությունը:

Հայո աստծո կապը Հայկական լեռնաշխարիի հետ առա-
վել ընդգծվում է նրա որդու՝ թնության ու զարրութիւն աստված
Դումուգիի՝ Արատուա երկրի հովանավոր աստվածը լինելով:
Ուշագրավ է, որ միջազնաբայրական Դումուգի-Թամմուզը համա-
պատասխանում է Օրիոնին, որն Աստվածաշնչի հայերեն
բարգմանության մեջ (Հոր, 9, 9) փոխարինված է Հայկով¹²⁷:
Այսինքն՝ Արատուայի հովանավոր աստվածը և նույն է Հայկը:

Աշխակված է իշխելու «ամենքերի տիրաւուն» Ինակնայի «սուրբ ճեղքով»,
առաջի հմարաւով և, որ որարեզար բամեն» և վերաբերի Ենանեային (Խենո-
հեռուսպայի հայկ. Անսիխոսին), որը Համագի սիրեցյան ու կյան էր:

¹²² Kramer, 1952, p. 23; Cohen, 1964, c. 211-212; Cohen, 1973, p. 125.

¹²³ Առաօն, 1983, c. 31-33; Մալխայոն, 1993, լգ 119-121:

¹²⁴ Gelb, 1944, p. 31, 94-96.

¹²⁵ Առաօն, 1983, c. 30-31.

¹²⁶ ՀԺՊ, լգ 190-194 և զաւկանությունը (յառնի հեղինակ՝ U.S. Նրեմյան):

¹²⁷ Մասորետական, 1993, լգ 304:

Հայայի որդի Շոտմոգիի անունը նշանակում է «հարսազսա (խակական) որդի», իսկ «Հայկ» անունը կազմված է «մայ(ա)» ցեղանունից (կամ դիցանունից) և -իկ մասմիկից (հմատ, հնդ-իկ, պարս-իկ և այլն), նշանակություն «մայ(ա)» ցեղի (կամ աստծո) ներկայացուցիչ, որդի: Հայր (Ենկի) աստվածը շումերաարական դիցարանուրյան մեջ արարչագրության գլխավոր դեմքերից է. իսկ Հայկ նախապետի մասին Մարտ Արաս Կատինայի մատյանից քաղելով՝ Խորենացին գրում է. «Աստվածներից առաջիններն ահեղ էին և երեւելի. և աշխարհի մեծամեծ բարինների պատճառ, աշխարհի ու բազմամարդուրյան սկիզբը: Մրանցից առաջ եկավ Խակաների սերտենյը... Մրանցից մեկն էր և Հապետուրյան Հայկը»¹²⁸...

Ամեն բան կարծես իր տեղին է ընկնում, և մեր առջև բացվում է հայոց ժազումնարանուրյան մոռացված կարևորագոյն մի էջ: Ըստ այդմ, մենք սերում ենք արարշագործ, աստվածների մեջ ինաւտնագոյն Հայր աստծուց, որի որդին էր դյուցազն Հայկը¹²⁹: Նրա անունը նշանակում էր Հայ(ա)ի որդի, ներկայացուցիչ, այսինքն՝ հայ, տատի և ինչպես Պատմահայրն է վկայում, նրա անունով կողմից բռնորս (Հայկ = հայ, Հայկը = Հայք - Հայաստան): Իսկ ասածու անունով ժողովրդի ու երկրի անփանակոչումը հայտնի երեսուց է հին աշխարհում (օրինակ՝ Աշուր աստծո անունը՝ Աշուր Երկիրը, մայրաբարձը և ժողովուրդը)...

ԱՅՐՁԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ավարտելով աշխատամբը, որն առաջին փորձն է ի մի քերելու Հայաստանի մասին Առաջավոր Ասիայում տարածված վաղնջական պատկերացումների առանձին դրվագները, մնկ

¹²⁸ Մամետ Խորենացի, 1981, էջ 109:

¹²⁹ Հին արևելյան սեպագիր տորյաքբեկան եթրաստմիկն Հայր աստվածը նույնացվել է Խոյոց անվանութիւն նախնի Հայկի նեա (Խասյան, 1985, էջ 84-93; Ստվարյան, 1992, էջ 40-41; Փիլիպայան, Թառնալյան, 1997, էջ 67-69): Դումոյի-Օքյան-Հայկ Խամացրուց և Վերոնչյան վաստանքը տախովցին մեզ վերսոնայել այդ անունին և հանգել Հայկի՝ Հայույք որդին իններա կարծիքին: Հայան նք ներքին նամարինչ և նախառենջ օվկիոնուի Նումնախ (նաման, նայկ). Խոյսի Սալիմուրին) որպին:

անգամ և նշենք, որ այն չի հսկուելում սպառիչ և վերջնական լինելու, ընդօրիկելու առկա ողջ նյութը: Ըերված նյութն էլ, սակայն, լիովին բավարարում է, որքազգելու հիմ առաջավորասիական հոգեսոր ընկապամներում Հայոց երկրի և ժողովրդի կերպարը: Դրանց համաձայն՝ մեր լեռնաշխարհը, նախրան մարդկության արարումը, եղել է աստվածների բնակության վայր, այստեղ է գտնվել դրախտը, որում արարվեց մարդկությունը, այստեղ էլ գտնվում կենաւու արևի կացարանը: Մեղսագործ մարդկության կործանումից հետո կրկին մեր երկիրը դարձավ մարդկության վերածննդի վայրը, որի կնքեց Աստծո ու մարդկանց հսկիչունական ոխար: Մեր երկրում ևն պահվել անմահության ու իմաստության խորհուրդները, տիեզերքը կառավարող սրբազն օրենքները: Աստվածային այդ երկրում ապրելու մնացնորդն ունեին բարեպաշտ մեր նախնիները, որոնք ընտրյաներն էին ընուրյան ու զարոնքի աստծո, որդիներն արարշագործ իմաստնակույն Հայու աստծո, որի անունով էլ, թերևս, կոչվեց մեր ժողովուրյոր...

Մեր երկրի՝ սրբազն և ժողովրդի՝ աստվածընտրյալ լինելու նախն պատկերացումները շարունակեցին գոյատեսկ նաև բրիստունեական շրջանում, շնայած, որ Աստվածաշնչում ընտրյալ են համարվում երեսները: Եղիշեն, նկատի ունենալով դրախտի տեղը վկայող երկու գետերը (Եփրատն ու Տիգրիսը) և տապանը, որպես մարդկության վերածննդի խորհրդանիշ, մեզ զերադասնի է համարում շատ որիշներից, «Երկու գետով եւ տապանաւուն զեր ի վերոյ ևսք բան զյուղիս: Եւ քէ զի՞նչ օգուտ է, նախ՝ իմաստութեան պատճառ է մեզ, անմոռաց պահելով զԱստուծոյ արարշութեամ, եւ ակն ունի փոփոխանն ի նոյն, ապա եւ՝ երիս բարեխօսս ունիմք առ Աստուծո»¹¹⁶...

Գրիգոր Նարեկացին «Հարուրյան տաղում» բրիստունեական ողջ աստվածաբանությունը խորհրդանշող սայի ճանապարհը դեպի Երուսաղեմ սկսվում է Մեծ Մասիսից: «Մային ազն իջաներ ի լինեն ի Մասիս... եւ ճոնայով գայր մտաներ յԵրուսաղեմ»¹¹⁷...

Հովհաննես Իմաստասերը, նշելով հայերի և երեաների աստվածնարյալ լինելը, ընդգծում է հայերի առաջնուրյունը

¹¹⁶ Խաչիկյան, 1992, էջ 245:

¹¹⁷ Գրիգոր Նարեկացի, 1981, էջ 59-65:

հրեաների նկատմամբ. «Արդ՝ զշարժումն ամսոց երրայեցոց և գանցարժութիւն նայ ամսոցը սահմանեաց Բարձրեալմ, զի հաւատ, եւ զիր եւ տումար այս երկու ազգիս ծխայն ետ աստուած, եւ այլոց ազգացը՝ մարդկան են արարեալ. զիրս հայոց՝ ասու ի վերայ վիմի հրեղեն աջով, անը՝ ի տախտակս քարեղենս, գտովմարս՝ անդ Մովսէս, սատ՝ Հայկն, յառաջ քամ զնա, զիս-վատս՝ անդ ի լեռն.՝ ի վայր պատզամատ, ասու՝ ի վերայ վիմի ուկի ուսամք ինքն Աստուած»¹³¹...

Ներսես Ընորհապտ գրի առած համելուկներից մեկը հայե-րին բնորոշում է հետևյալ կերպ.

«Քան զամանայն այլ ազգ ի վեր,

Ազգ մի զիտեմ՝ հաւատը բազեր

(պատասխանը՝ Հայեր)¹³²...

Միջնադարում հայոց պետականության անկանոն հացոր-դնեցին տառապանքի ու սորության դարեր, երբ օտարները տիրելով մեր Երկրին և նախոտակ ունենալով նախ հոգեբանու-րեն, ապա և ֆիզիկական ոչնչացնելով մեզ, մեր ժողովրդին մե-րարկեցին անկատարության ու թօրարժեքության բարդույր-ներ. ինչի հետևանքները զգալի են և այսօր: (Քաջ զիտակցում ենք, որ սորկանության դարսվոր (և այսօր էլ շարունակվող) բարոզության հենքի վրա ներկայացվող զրբույկը կարող է պի-տակվել որպես ազգային սնապարժության սերմանում, ուստի մեկ անգամ ևս բնդգծենք, որ մեր եզրակացություններն արվել են նախևառաջ դրացի ժողովուրդների գրավոր հիշատակութ-յունների հիմքում):

Մեր պատմության մեծագույն ճգնաժամը հառահարված է: Տիեզերքում գործող օրինաչափության համաձայն՝ ամեն բան վերայառնում է «Ո շրջանս յուր»: Ուստի և հավատում ենք, որ նոր դարաշրջանում մեր ժողովրդի հանապարհը պետք է ընթանա դնալի իր սկզբնական վեհությունը...

